

ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՔՈՒԷՅՈՒ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ՆՈՐ ՇՐՋԱՆ, Ը. Տարի, Թիւ 349, Ուրբաթ, 02 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2016

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

Հ.Հ. ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՕՐ ԴԵՍՊԱՆ՝ ՊՐՆ. ՄԱՆՈՒԷԼ ԲԱԴԵՅԵԱՆ

ԱՅՑԵԼԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Երեքշաբթի, 30 Օգոստոս, 2016 ին, Հ.Հ. Արտակարգ եւ Լիազոր նորանշանակ Դեսպան՝ Պրն. Մանուէլ Բադեյեան, իր անդրանիկ այցելութիւնը տուաւ Ազգային



Առաջնորդարան: Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Գերպ. Տէր Մասիս Ծ. Վրդ. Զօպույեան, դիմաւորեց Պրն. Դեսպանը, որուն կ'ընկերակցէին Տիկինը՝ Լիլիթ Գալստեանն ու Հիւպատոս՝ Պրն Լեւոն Պետրոսեանը: Մտերմիկ զրոյցէ ետք, անոնք շրջեցան եկեղեցոյ զանազան բաժինները: Պրն. Դեսպանի դիմաւորութեան մաս կազմեցին նաեւ Սրբոց Վարդանանց եկեղեցոյ հովիւ՝ Արժ. Տէր Արտակ Քինյ. Քէհեաեանն ու Ազգային Վարչութեան ատենապետ՝ Պրն Մունիր Դարբինեանը:

ՀԱՅԿԱԿԱՆ

«Կրթությունը Պետք է Հաւասար Ըլլայ Բոլորին Համար» Կ'ըսէ Լեւոն Մկրտչեան



Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Լեւոն Մկրտչեան, օգոստոսեան խորհրդակցութեան ծիրին մէջ, կը շարունակէ հանդիպումներ ունենալ դպրոցներու տնօրէններուն հետ: 30 օգոստոսին խորհրդակցութիւն կատարուած է Երեւանի հիմնական դպրոցներու տնօրէններուն հետ:

Լրագրողներուն հետ ունեցած զրոյցին ընթացքին նախարարը նշած է, որ այս հանդիպումներուն հիմնական նպատակը այն է, որ անձամբ տեղեակ ըլլայ իւրաքանչիւր դպրոցի դիմաց

ծառայած խնդիրներուն մասին: Խօսելով, մասնաւորաբար, մարզային այցելութիւններուն մասին՝ նախարարը նշած է, որ իւրաքանչիւր մարզ իր իւրայատկութիւնները ունի, եւ կան մարզեր, որոնք դպրոցներու նիւթականի ապահովման առնչուող բաւական մեծ հարցեր կը դիմագրաւեն: Այդ պատճառով ալ, ըստ նախարարին, իրենք կը մտածեն դպրոցներու ֆինանսաւորման ձեւը թարմացնելու մասին, քանի որ Հայաստանի մէջ կարելի չէ մէկ բանաձեւով բոլոր դպրոցներուն նիւթական հարցերը լուծել:

«Բացի ատկէ, շատ մեծ խնդիր է փոքր կառոյց ունեցող դպրոցներուն հարցը, քանի որ երկկառոյց, եռակառոյց կրթութեան ձեւաչափը կ'ազդէ կրթութեան որակին վրայ: Պետք է հասկնանք, թէ այդտեղ ի՞նչ պէտք է ընենք: Ըստ էութեան, հարցին լուծումը տակաւին չունինք: Մեր դպրոցներուն զգալի հատուածը 100-է քիչ աշակերտներ ունի, եւ այդ երեխաները մեղաւոր չեն, որ, ըսենք, 3000 մէթր բարձրութեան վրայ կ'ապրին: Մեքենական լուծում չենք կրնար առաջարկել, այսինքն՝ փակել դպրոցը եւ բոլորը փոխադրակառքով տեղափոխել մէկ այլ դպրոց չենք կրնար՝ ճամբաներ չկան, ձմրան ընթացքին ճամբաները վատ վիճակի մէջ կ'ըլլան: Մենք պարտաւոր ենք նոր ձեւեր մշակելու, եւ հիմա համաշխարհային փորձը կ'ուսումնասիրենք, քանի որ Քանաստայի եւ Ռուսիոյ հիւսիսային շրջաններուն մէջ նոյնպէս կան նման դպրոցներ», ըսած է նախարարը:

Ըստ անոր, Հայաստանի մէջ գործող 1430 դպրոցներէն 800-էն աւելին ունին մինչեւ 300 աշակերտ: Աւելի մեծ ու ընդարձակ դպրոցներն ու դասարանները, Մկրտչեանի համաձայն, սորվելու մղում կու տան, բայց հոն կրնայ կրթութեան որակը բաւարար չըլլալ:

Պատասխանելով այն հարցումին, թէ կա՞նք դպրոցներ, որոնք, այնուամենայնիւ, առաջին դասարանցիներ պիտի չունենան՝ նախարարը ցաւով նշած է, թէ կան: «Վերջնական պատկերը տակաւին յստակ չէ, բայց քանի մը տարի է՝ ունինք նման հարցեր: Օրինակ՝ Չանգեզուրի լեռնային շրջաններուն մէջ կան դպրոցներ, որոնք պիտի չունենան առաջին դասարանցիներ», ըսած է Մկրտչեան:

Նախագահ Սարգսյանի Ընդունում է Ճափոն – Հայաստան Խորհրդարանական Բարեկամության Լիկայի Պատուիրակությունը



Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի՝ 31 օգոստոսին ընդունելով Ճափոն-Հայաստան խորհրդարանական բարեկամության լիկայի նախագահ Սեիշիրո Էթոյի գլխավորած պատուիրակությունը, հաստատեց, որ Ճափոն առանձնայատուկ տեղ կը գրավէ Արեւելեան Ասիոյ երկիրներուն հետ Հայաստանի յարաբերութիւններուն մէջ, եւ որ Հայաստան կը ձգտի համակողմանի ու փոխշահաւէտ գործակցութիւն զարգացնել բարեկամ Ճափոնի հետ:

Հանրապետութեան նախագահը յոյս յայտնեց, որ պատուիրակութեան այցելութիւնը նոր խթան պիտի հաղորդէ երկու երկիրներու միջխորհրդարանական կապերու սերտացման՝ որակապէս նոր մակարդակի բարձրացնելով այդ մարզին մէջ հայ-ճափոնական համագործակցութիւնը:

Զրուցակիցները վերլիշեցին 2012 թուականին Հայաստանի նախագահին Ճափոն կատարած պաշտօնական այցելութիւնը, որ, ըստ բոլորին, նոր դուռ բացաւ երկկողմանի համագործակցութեան հետագայ ընդլայնման եւ խորացման դիմաց:

Նախագահ Սարգսյան. «Միայն Մեր Բնագիտութեան Եւ Ուսողութեան Դպրոցը Աւելի Շատ Մրցանակներ Շահած Է, Քան Վրաստանն Ու Ազրայէճանը Միասին»

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյան Չորեքշաբթի օր հիւրընկալած է 2015-2016 ուսումնական տարուան բարձր յառաջդիմութիւն ցուցաբերած՝ Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատութիւններու մետալակիր շրջանաւարտները, ինչպէս նաեւ դպրոցականներու միջազգային առարկայական ողիմպիականներուն 2016-ին յաջողութիւններու հասած՝ մայրաքաղաքի եւ մարզերու աշակերտները, «Քենկուրու» միջազգային ուսողութեան եւ հայոց լեզուի «Մեղու» մրցումներու մրցանակակիրները: Նախագահ Սերժ Սարգսյան պատասխանած է հանդիպման մասնակիցները հետաքրքրող հարցումներուն, որմէ ետք արդէն ասանդական դարձած հանդիպումին ընթացքին շրջանաւարտներն ու աշակերտները Հայաստանի Հանրապետութեան նախագահին եւ Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարին կողմէ ստացած են իրենց պարգևները՝ մետալները, հաւաստագիրներն ու նուէրները:

Հանրապետութեան նախագահը ողջունած է հանդիպման մասնակիցները իր նստավայրին մէջ, շնորհաւորած ուսումնառութեան մէջ ձեռքբերումներուն համար, մաղթած հետագայ նորանոր յաջողութիւններ: Ան մասնաւորաբար ըսած է.

«Միրելի՛ դպրոցականներ, Յարգելի՛ մանկավարժներ,

Արդէն տեւական ժամանակ է, որ ամէն տարի այս դահլիճը կը հրաւիրուին դպրոցական հերոսները, անոնք, որոնք ուրիշներէ կը տարբերին իրենց գիտելիքներով, կը սորվին գերազանցապէս, դպրոցը կ'աւարտեն ոսկիէ մետալով եւ կը մասնակցին համաշխարհային առարկայական ողիմպիականներուն, կը դառնան մրցանակակիրներ ու «Քենկուրու» եւ «Մեդու» մրցումներու յաղթողներ:



«Ասիկա շատերու համար առաջին ձեռքբերումն է, բայց վստահ եղէք, որ ձեր շնորհիւ եւ ձեր աշխուժ մասնակցութեամբ ու նաեւ աշխուժ մասնակցութեամբ այն բոլոր երիտասարդներուն, որոնք այս տարիներուն ընթացքին հրաւիրուած են այս դահլիճը՝ խրախուսանքի եւ մեծարման խօսքեր լսելու, պիտի կառուցուի ապագայ Հայաստանի դիմագիծը: Ես վստահ եմ, որ դուք ասիկա պիտի ընէք՝ օգտագործելով աւագ սերունդին փորձը եւ մեր նախնիներուն գիտելիքի եւ կրթութեան նկատմամբ յաւերժական ձգտումը: Դուք նաեւ շատ աւելի լայն կարելիութիւններ պիտի ունենաք բանալու դռները աշխարհին առջեւ նորարարական գաղափարներ ներս բերելու համար, որպէսզի այդ գաղափարները կլանէք, մարսէք եւ վերարտադրէք ու կատարելագործէք: Այս տարի Հայաստանի դպրոցականները միջազգային առարկայական ողիմպիականներէն վերադարձած են 15 մրցանակներով՝ 1 ոսկի, 3 արծաթ եւ 11 պրոնզէ մետալներով: Ասիկա, վստահաբար, փայլուն նուաճում է, եւ ես անկեղծօրէն երջանիկ եմ, որ վերջին ութ-տասը տարիներուն ընթացքին մեր դպրոցականները այդ ողիմպիականներէն կը վերադառնան 15-էն 20 մետալներով: Միայն մեր բնագիտութեան եւ ուսողութեան դպրոցը աւելի շատ մրցանակներ շահած է, քան Վրաստանն ու Ազրպէյճանը միասին: Ասիկա չափազանց կարելոր է մեծ ցուցանիշ է, որ պատիւ կը բերէ որեւէ ժողովուրդի: Վստահաբար, նաեւ շատ ուրախ եմ, որ կ'ընդլայնուի մետալակիրներուն աշխարհագրութիւնը: Շատ լաւ է, որ Երեւանին եւ Գիւմրիին միացաւ Վանաձորը: Վստահ եմ, որ տարիներ ետք մենք պիտի կարենանք ըսել, որ Հայաստանի գրեթէ բոլոր շրջաններէն ունինք համաշխարհային առարկայական ողիմպիականներու յաղթողներ:

«Ես բոլորդ կը շնորհաւորեմ, բոլորիդ կը համբուրեմ եւ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել ձեր ծնողներուն, ձեր ուսուցիչներուն, անոնց, որոնք կրցան ձեզի հետ միասին հասնիլ այդ արդիւնքներուն: Աշակերտը պէտք է ձգտում ունենայ, աշակերտը պէտք է ցանկութիւն ունենայ, ուսուցիչը պէտք է ունենայ գիտելիք հաղորդելու կարողութիւն եւ ունակութիւն: Երբ այս երկու հանգամանքները կը միանան, մենք կը հասնինք շատ բարձր արդիւնքներու: Ապրի՛ք», ողջոյնի խօսքին մէջ ըսած է նախագահ Մերժ Սարգսեան:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՄԷՁ» ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան եւ Երեւանի Պետական Համալսարանի նախաձեռնութեամբ, 25-26 Օգոստոս 2016-ին տեղի ունեցաւ «Հայկական աշխարհը համացանցին մէջ» գիտաժողովը, Երեւանի Պետական Համալսարանին մէջ: Գիտաժողովին կը մասնակցէին Հայաստանի եւ Սփիւռքի մէջ գործող զանազան կառոյցներու ներկայացուցիչներ: Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, սոյն

գիտաժողովին մասնակցեցաւ Կաթողիկոսարանի Լսատեսողական Բաժանմունքի վարիչ՝ Հոգ2. Տ. Պետրոս Վրդ. Մանուէլեան:

Երկու օրերու վրայ երկարած գիտաժողովը կ'ընգրկէր գլխաւոր երեք թեմաներ. «Հայկական աշխարհը համացանցի գիտակրթական հարթակին վրայ», «Տեղեկատուական անվտանգութեան մարտահրաւերները համացանցի մէջ» եւ «Սփիւռքը համացանցային հարթակին վրայ»:

«Սփիւռքը համացանցային հարթակին վրայ» խորագրով նիստի ընթացքին, Հայր Պետրոս ելոյթ ունեցաւ «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութիւնը համացանցի ճամբով» նիւթով: Ան ներկայացուց Կաթողիկոսութեան ունեցած գիտական հարուստ հիմքը, փորձառութիւնն ու պատրաստակամութիւնը համացանցի մէջ հայկական ներկայութիւնը աշխուժացնելու եւ Կաթողիկոսարանին բերած մասնակցութիւնը այդ ուղղութեամբ տեղի ունեցած նախաձեռնութիւններուն: Ան խօսեցաւ նաեւ Կաթողիկոսարանին եւ Վեհափառ Հայրապետին կողմէ նորարար դարաշրջանի մեզի տուած հաղորդակցութեան նոր միջոցներու գործածութեան փորձառութեան մասին:

Նիստերու աւարտին տեղի ունեցաւ հարց ու պատասխան եւ շինիչ քննարկումներ: Առաջարկուեցաւ ստեղծել համակարգող մարմին մը, որ պիտի նպաստէ այս մարզին մէջ տարուող աշխատանքներու համակարգման:

Ուրուկուէյի Մէջ Պիտի Կայանայ «Լեռնային Ղարաբաղի Ֆորում»

2 Սեպտեմբերին Ուրուկուէյի մէջ պիտի սկսի «Լեռնային Ղարաբաղի ֆորումը»՝ նուիրուած Արցախի անկախութեան հռչակման 25-ամեակին:



Ուրուկուէյի Հայ դատի յանձնախումբը կը տեղեկացնէ, որ ֆորումը պիտի միաւորէ գործիչներ, գիտնականներ եւ օրէնսդիրներ, որպէսզի նպաստեն Ուրուկուէյի դիրքորոշումին՝ աջակցելու Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման:

Ֆորումին պիտի մասնակցին ծերակուտականներ, երեսփոխաններ, պատմաբաններ, մարդու իրաւունքներու պաշտպաններ, նաեւ Միացեալ Նահանգներու մէջ Լեռնային Ղարաբաղի մնայուն ներկայացուցիչ Ռոպերթ Աւետիսեան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

**Մոսկուա Անգարային Կոչ Ուղղեց՝ Քիւրտերը
Չհարուածելու. Ելլտըրըմ. «Քրտական Ժողովուրդի
Պաշտպանութեան Ջոկատները Պետք Է Վերադառնան
Եփրատի Արեւելեան Ափ»**



Թուրքիոյ վարչապետ Պինալի Ելլտըրըմ Չորեքշաբթի օր յայտարարեց, որ «Եփրատի վահան» գործողութեան ճամբով Թուրքիոյ հետապնդած նպատակը իր սահմաններուն անվտանգութեան ապահովումն է եւ իր քաղաքացիները բոլոր յարձակումներէն պաշտպանելը: «Այսուհետեւ մեր հողերուն կամ սահմաններուն դէմ որեւէ ոսնձգութիւն կամ յարձակում պիտի չընդունինք», ըսաւ ան:

Ելլտըրըմ նշեց. «Եփրատի վահան» գործողութիւնը պիտի շարունակուի, մինչեւ որ մեր սահմանները եւ մերձակայ բոլոր շրջանները ամբողջովին ձերբազատին ահաբեկչական տարրերէն»:

«Ժողովրդավարական միութիւն կուսակցութիւն եւ Ժողովուրդի պաշտպանութեան ջոկատներ կազմակերպութիւնները ահաբեկչական ՔԱԿ-ի թելեր են, եւ այս կազմակերպութեանց զինեալները պետք է վերադառնան Եփրատի արեւելեան ափ», յայտարարեց Թուրքիոյ վարչապետը՝ աւելցնելով. «Միացեալ Նահանգներ Ժողովրդավարական միութիւն կուսակցութեան եւ Ժողովուրդի պաշտպանութեան ջոկատներու Եփրատի արեւելեան ափ վերադառնալուն վերաբերեալ բազմաթիւ խոստումներ տուին, եւ մենք խոստումնադժութիւնը չենք ընդունիր»:

«Անատոլու» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Թուրքիոյ Եւրոպական Միութեան հարցերով նախարար Էօմեր Չելիք յայտնած է, որ Թուրքիոյ կառավարութիւնը յայտարարած է, որ քրտական ուժերուն եւ թրքական բանակին միջեւ զինադուլի մասին խօսք չի կրնար ըլլալ՝ աւելցնելով, որ Ժողովրդավարական միութիւն կուսակցութիւնը ահաբեկչական կազմակերպութիւն է եւ պետք է ոչնչացուի:

Նշենք, որ մէկ օր առաջ ամերիկեան բանակի կեդրոնական հրամանատարութեան բանբեր գնդապետ Ճոն Թոմաս յայտնած էր. «Անցնող ժամերուն ընթացքին երաշխիքներ ստացանք, որ առնչակից բոլոր կողմերը (քիւրտերէն եւ թրքական բանակէն, «Ա.») պիտի դադրեցնեն փոխադարձ հրացանաձգութիւնը եւ կեդրոնական ՏԱՀԵՇ-ի սպառնալիքին վրայ»:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Թանժու Պիլկիչ յայտարարեց, որ Անգարայի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Պաս նախարարութիւն կանչուած է անոր փոխանցելու համար վերոնշեալ յայտարարութեան նկատմամբ թրքական կառավարութեան դժգոհութիւնը:

«Բախումները պիտի չդադրին, մինչեւ որ թրքական սահմաններէն հեռացուին ահաբեկչական խմբաւորումները, որոնք թուրքերուն համար վտանգի վերածուած են», շեշտեց ան:

Միւս կողմէ, Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Զախարովա թուրքիոյ կոչ ուղղեց հիւսիսային Սուրիոյ մէջ իր գործողութիւններուն ընթացքին չհարուածելու քիւրտերը:

Զախարովա ըսաւ, որ պէտք է լուծել ահաբեկիչներն ու չափաւորական ընդդիմութիւնը իրարմէ զատորոշելու հարցը: Ան նշեց, որ միջազգային ընտանիքը կոչ կ'ուղղէ սուրիական տագնապը լուծելու եւ զինուորական գործողութիւններէն հրաժարելու՝ ընդգծելով, որ Սուրիոյ մէջ որեւէ գործողութեան պարագային պէտք է յարգել միջազգային օրէնքը եւ այդ գործողութեան շուրջ համակարգում կատարել Դամասկոսի հետ:

Թրքական աղբիւր մը «Ռոյթըրզ» լրատու գործակալութեան յայտնեց, որ թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուք Զաուշօղլու իր ռուս գործընկերոջ հետ քննարկած է Սուրիոյ մէջ քաղաքական հոլովոյթի ձեռնարկումին ջանքերը:

Իրանի Թուրքիոյ Կոչ Կ'ուղղէ Անյապաղ Դադրեցնելու Սուրիոյ Մէջ Զինուորական Գործողութիւնը



ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Պահրամ Քասեմի յայտարարած է, որ Իրանի արտաքին գործոց նախարարութիւնը մտահոգ է Սուրիոյ մէջ թրքական զինուորական գործողութենէն՝ նշելով, որ անհրաժեշտ է հետեւիլ Սուրիոյ գերիշխանութեան պահպանման:

«Շրջանի խաղաղ ժողովուրդներու ահաբեկչութեան դէմ պայքար մղելու եւ շրջանային խաղաղութեան համար քայլերու

ձեռնարկելու ձգտումը չի կրնար հիմք հանդիսանալ Սուրիոյ տարածքային ամբողջականութեան խախտման եւ առանց սուրիական իշխանութիւններուն հետ համաձայնութեան զինուորական գործողութիւններ կատարելու», յայտարարած է Քասեմի:

Ան աւելցուցած է, որ Սուրիոյ տարածքին թուրքիոյ ռազմական ներկայութիւնը միայն կը բարդացնէ շրջանային իրավիճակը:

Ըստ Քասեմիի, թրքական բանակը անյապաղ պէտք է դադրեցնէ Սուրիոյ մէջ զինուորական գործողութիւնը:

Միւս կողմէ, «Տէօչէ Վելլէ» հաղորդեց, որ Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Հոլլանտ Ֆրանսայի մէջ դիւանագետներու հետ հանդիպումին յաջորդած մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարած է, որ Սուրիոյ մէջ Ռուսիոյ եւ Թուրքիոյ գործողութիւնները աւելի կը լարեն այդ երկրին մէջ իրավիճակը:

Ան անդրադարձած է նաեւ Սուրիոյ Ժարապլոս շրջանին մէջ Թուրքիոյ զինուորական գործողութիւններուն՝ յայտարարելով, որ այդ շրջանին մէջ Թուրքիա աւելի կը պայքարի քրտական միաւորներու դէմ, քան թիրախ կը դարձնէ ՏԱՀԵՇ ահաբեկչական խմբաւորումը:

ԱՆՂՐԱՂԱՐՉ

Ուաշինկթրն Անախորժ Կացութեան Մը Դէմ Յանդիման

24 օգոստոսին թրքական ուժերուն հիւսիսային Սուրիոյ մէջ կատարած միջամտութիւնը բնականաբար ինքնագլուխ քայլ մը չէր, այլ շղթայագերծուեցաւ ստանալէ ետք միջազգային, մասնաւորաբար Միացեալ Նահանգներու կանաչ լոյսը: Այսօր եթէ նշեալ երկու կողմերուն միջեւ տարակարծութիւն մը գոյութիւն ունի, ասիկա նշեալ գործողութեան փաստին շուրջ չէ, այլ անոր առաքելութեան: Փենթակոն խստիւ քննադատեց քրտական ուժերուն դէմ թրքական բանակին եւ անոր հովանիին տակ գործող սուրիական զինեալ ընդդիմութեան գործողութիւնները՝ զանոնք կոչելով «անընդունելի եւ խոր մտահոգութեան աղբիւր մը»: Փենթակոնի ղեկավար Էշթրն Քարթըր յստակօրէն նշեց, որ Թուրքիա կը շարունակէ մնալ Միացեալ Նահանգներու դաշնակիցը ՕԹԱՆ-ի եւ ՏԱՀԵՇ-ի դէմ պայքարող դաշինքներուն մէջ, սակայն աւելցուց, որ իր երկիրը նաեւ կ'աջակցի քրտական ղեկավարութեամբ Սուրիոյ ժողովրդավարական ուժերուն:



Օպամայի խորհրդական Պեն Ռոսոզ հարցերը աւելի յստակացնելով յայտարարեց. «Մենք չենք աջակցիր եւ պիտի չպաշտպանենք թրքական զինեալ ուժերու շարժումը Սուրիոյ հիւսիսային շրջաններուն մէջ եւ Թուրքիոյ գործունէութիւնը Սուրիոյ ժողովրդավարական ուժերուն դէմ, որոնց կը պաշտպանեն Միացեալ Նահանգները»: Ուաշինկթրն առնչակից երկու կողմերուն կոչ ուղղեց գերծ մնալու իրարու դէմ պատերազմելէ եւ փոխարէնը կեդրոնանալու ՏԱՀԵՇ-ի դէմ պայքարին վրայ: Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ժան Մարք Էյրոյի կեցուածքը աւելի կարծր էր. ան զգուշացուց Անգարան «Սուրիոյ մէջ քրտական դատին վնասելէ»:

Հարցը այն է, որ Թուրքիա շատոնց արդէն Եփրատ գետը ճշդած էր իբրեւ կարմիր գիծ՝ բազմիցս սպառնալով հարուածել քրտական ուժերը, եթէ անոնք անցնին նշեալ գետին

արեւմտեան ափը: Թրքական գործողութեան անունը «Եփրատի վահան» է, իսկ վահանը ոչ միայն պաշտպանուելու համար կը գործածուի, այլ նաեւ «խռովարարները» ետ մղելու: Այդ գործողութիւնը ոչ միայն ՏԱՀԵՇ-ի մաքրագործման համար է, այլ նաեւ՝ քրտական ուժերը Եփրատի արեւմտեան ափէն արեւելեան ափ վտարելու: Քրտական ուժերը ամերիկեան թոյլտուութեամբ ու Ուաշինկթընի հովանիին տակ ճիշդ ատիկա կատարեցին Մընպեժի ազատագրման գործողութիւններուն ընթացքին, այն խոստումով, որ գործողութեան բարեյաջող աւարտին պիտի վերադառնան Եփրատի արեւելեան ափ. բան մը, որ սակայն, հակառակ Անգարային տուած Ուաշինկթընի խոստումին, չկատարեցին: Սուրիացի քիւրտերը, ի պատասխան Եփրատի արեւմտեան ափէն հեռանալու Ուաշինկթընի յորդորներուն, յայտարարեցին, որ իրենք պիտի չհեռանան այդ տարածքէն, որովհետեւ այդ շրջանները քրտաբնակ են եւ իրենք արիւն թափած են այդ տարածքները ՏԱՀԵՇ-էն ազատագրելու համար: Փենթակոն իր յորդորը խստացնելով նշեց, որ «քրտական Ժողովուրդի պաշտպանութեան ջոկատները պետք է անմիջապէս Եփրատի արեւելեան ափ նահանջեն»՝ սակայն աւելցնելով, որ ըստ իր տեղեկութեան, «ատիկա մեծ մասամբ կատարուած է»: Անգարա եւ Ուաշինկթըն համակարծիք են, որ քիւրտերը պետք է հեռանան այդ շրջանէն: Անոնց տարակարծութիւնը այդ հեռացումի իրագործման ձեւին շուրջ է:

Քիւրտերը 17 մարտ 2016-ին յայտարարեցին Հիւսիսային Սուրիոյ Ռոժաւա (Արեւմտեան Քիւրտիստան) դաշնակցային մարզը, որ ըստ այդ յայտարարութեան, պիտի ըլլայ Սուրիոյ հողային ամբողջականութեան ծիրին մէջ: Կը թուի, թէ այդ մարզին իբրեւ արեւմտեան սահման ճշդուած է Եփրատ գետը: Այդ բնական սահմանը ոչ միայն կարմիր գիծ է քիւրտերուն համար, այլ նաեւ թրքական եւ սուրիական բանակներուն համար: Այդ իրողութեան յստակ մէկ արտայայտութիւնը կարելի է նկատել անցնող երկու շաբթուան ընթացքին ամերիկեան «Էֆ-22» կործանիչներու կողմէ սուրիական պատերազմական օդանաւերու Հասաքէի օդային տարածքէն վտարման երկու դէպքերը: Վերջին դէպքին պարագային քիչ մնացած էր, որ ամերիկեան կործանիչները վար առնէին «սահմանախախտ» սուրիական օդանաւերը:

Ուաշինկթընի համար խիստ անախորժ երեւոյթներ եւ գլխացաւանք են իր երկու դաշնակիցներուն՝ թուրքերուն եւ քիւրտերուն միջեւ բախումները, ինչպէս նաեւ խիստ անբաղձալի է բախումներուն մէջ, Հասաքէի օդային տարածքին մէջ կատարուածին նման, ուղղակի կերպով միջամտելը ի նպաստ կողմերէն մէկուն: Ուաշինկթըն անհամեմատ աւելի անախորժ ու նեղ կացութեան պիտի մատնուի, եթէ թրքական բանակը շահագործէ այդ հանգամանքը եւ յանկարծ դիմէ Եփրատի արեւելեան ափ անցնելու քայլին:

ՎԱՀՐԱՍ ԷՄՄԻԵԱՆ

ԱԿՆԱՐԿ

Արցախի Տարածքային Ամբողջականության Սահմանադրականօրէն Ամրագրուող Դրոյթները

Արցախի անկախութեան կամ հանրապետութեան հիմնադրութեան 25-ամեակի նշումին ըստ էութեան այժմեական հնչեղութիւն տալու որեւէ փորձ անպայման պիտի կեղրոնանայ ապրիլեան պատերազմին, անոր հետեւած բանակցային գործընթացի զերաշխուժացման եւ անոնց զուգահեռ Արցախի սահմանադրութեան բարեփոխման ընթացակարգի սկիզբին վրայ:



Հաւանաբար ալ այս երեք ուղղութիւնները սերտօրէն փոխկապակցուած են, եթէ գրեթէ սառեցուած բանակցութիւններու թափով վերսկսումն ու միջնախազահական ձեւաչափով հանդիպումներու յաջորդականութիւնը նկատի ունենանք՝ քառօրեայ պատերազմին անմիջականութեամբ:

Եթէ սահմանադրական առաջադրուած բարեփոխումները ամրապնդեն եւ վերաամրազրեն Արցախի տարածքային ամբողջականութեան դրոյթները, ապա արդէն բաւական հունաւորուած կ'ըլլայ թէ՛ կարգավիճակի եւ թէ՛ տարածքներու ուղղութեամբ արցախահայութեան կամքը:

Հայկական կողմը բանակցութիւններուն յաջողած է իր առաջադրանքներն ու միջազգային ընտանիքի մօտեցումները համատեղել եւ բանակցային ընդհանուր տրամաբանութեամբ արծարծուող հարցերուն մէջ մեկուսացնել Պաքուն:

Այս պահու դրութեամբ Վիեննան եւ Վիեննան վերահաստատող Փեթերսպուրկն են եւ այնտեղ կայացած համաձայնութիւնները՝

Ա. Քննարկուած են արցախեան հակամարտութեան գօտիին վրայ ապրիլի սկիզբը կատարուած հրադադարի կոպիտ խախտումին պատճառով ստեղծուած լարուած իրավիճակը եւ անկէ դուրս գալու հաւանական ուղիները:



Բ. Համանախազահող երկիրները շեշտած են 94-ի եւ 95-ի համաձայնագիրները յարգելու եւ անոնց իրականացումէն չշեղելու անհրաժեշտութիւնը:

Գ. Համաձայնություն գոյացած է քայլերու ձեռնարկելու մշտադիտարկման եւ միջադեպերու հետաքննության մեքանիզմի հաստատման եւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչի իրաւասութիւններու յաւելման առնչութեամբ՝ հակամարտութեան կարգաւորման ուղղութեամբ բանակցութիւններու հաւանական վերսկսման համար:

Պարզ է տրամաբանութիւնը. յղում կայ այն փաստաթուղթերուն, որոնց մշակման բանակցութեան եւ որոնց տակ ստորագրութեան մասնակցած է պաշտօնական Ստեփանակերտը: Այս կը նշանակէ նաեւ, որ որեւէ նոր համաձայնագիր կամ խաղաղութեան մեծ համաձայնութիւն չի կայանար առանց Ստեփանակերտի մասնակցութեան: Ասոր զուգահեռ կարելոր քայլ առնուած է նաեւ շփման գիծին վրայ կատարուող յարձակումները մշտադիտարկելէն անդին զանոնք հետաքննելու իմաստով. իսկ հետաքննութիւնը նաեւ պատասխանատուութեան մատնանշում եւ պատասխանատուութեան ստանձնում կ'ենթադրէ: Կէտ մը, որ մնայունօրէն առաջ կը քշուէր հայկական կողմէն եւ կը բախէր ազրպէյճանական մերժողականութեան:

Ուրեմն հիմա առաւելները այս առումներով ի նպաստ հայկական կողմին են: Սահմանադրական բարեփոխումներուն մէջ, պահ մը զանց առնելով գերնախագահական լիազօրութիւններով հաստատելի կառավարման համակարգի անպատեհութիւնները, կարելոր է Արցախի տարածքային ամբողջականութեան իրաւադրոյթներու ամրագրումը: Թէ՛ եղանակով եւ թէ՛ բովանդակային առումով:

Եղանակը հանրաքուէն է. միջազգային ընտանիքին կողմէ ժողովրդավար աշխատելաձեւի ընկալուած դրութիւն, որուն նկատմամբ արցախահայութիւնը փաստած է ժողովրդավար ընտրաեղանակի բարձր եւ օրինակելի կատարողականութիւն: Եւ մնալով միջազգային հանրութեան ժողովրդավարական կարգերը հաստատելու սկզբունքին կառչած, սահմանադրականօրէն Արցախի տարածքային ամբողջականութեան վերաճղումը կատարելով, Ստեփանակերտը իր կամքը նախանշած կ'ըլլայ արդէն բանակցային լուծումի համաձայնութեան ուղղութեամբ:


Մինչ Ուրուկուէլի արտաքին գործոց նախարարութենէն, Չիլիի խորհրդարանէն եւ Ֆրանսայի խորհրդարանի պաշտօնական խօսափողերէն հնչած յայտարարութիւններն ու ձեւակերպումները, չհաշուած տարբեր երկիրներու նահանգային մակարդակի ճանաչումները, Արցախի միջազգային ճանաչման ուղի հարթող կարելոր ամրագրումներ են. այս պատճառով ալ, Արցախի կառավարման համակարգի փոփոխութիւնները վստահաբար նկատի պէտք է ունենան Արցախի միջազգային ճանաչման գործին աջակցող օտարերկրեայ գործընթացներու եւ միջազգային կառոյցներու կողմէ իրաւական, ժողովրդավարական, ինքնիշխան պետութեան նոր փուլի կայացման անոնց կողմէ ընկալելիութիւնը:

www.aztarar.com

www.aztagdaily.com

ԼՈՒՐԵՐ ԳՍՂՈՒԹՆԵՐԷՆ

«Ո՞վ Են Այս Հայերը» Գիրքը՝ Թրքերենով



Վերջերս, «Արաս» հրատարակչատունը համագործակցությամբ, «Հայ Հիմնարկ»-ը լոյս ընծայեց «Ո՞վ են այս հայերը» խորագիրը կրող գիրք մը՝ թրքերենով: Անգլերեն բնագիրէ թարգմանուած այս գիրքին հեղինակն է Սուզըն Փոլ Փէթի, որուն հետ գործակցած են Գագիկ-Ստեփան Սարգիսեան եւ Մարալ Քերովբեան: Գիրքը թրքերենի թարգմանած է Լորա Սար, իսկ գեղարուեստական ձեւաւորումը կատարած է Մելիսա Արսէնեան:

Նշենք, որ այս գիրքին անգլերեն բնագիրը հրատարակուած է Լիզպոնի «Գալուստ Կիւլպէնկեան» եւ «Պենլիեան» հիմնարկներուն միջոցներով: Հեղինակը Լոնտոնի «Հայ հիմնարկ»-ի նախկին ղեկավարն է, իսկ ներկայիս ան մաս կը կազմէ հոգաբարձունքու խորհուրդին: Այս գիրքը հպանցիկ ակնարկ մըն է՝ հայոց պատմութեան, երկրագունդի վրայ հազարաւոր տարիներու երթին, ներկային, կենցաղին, հաւատքին,

լեզուին ու մշակոյթին, հարուստ ժառանգութեան, եւ պետականութեան: Ներկայացուած է պարզ ու մատչելի ձեւով եւ ուղղուած է հաւասարապէս գրեթէ բոլոր սերունդներուն: Հոն կը գտնենք ողջունելի ուղեցոյց մը, որ կը նպաստէ հայ ժողովուրդը ճանչնալու եւ անոր շուրջ երեք հազար տարուան պատմութեան ծանօթանալու: Գիրքին մէջ ներկայացուած են Հայաստանը, սփիւռքը, այսօրուան Թուրքիոյ տարածքի պատմականօրէն հայաբնակ շրջանները, ինչպէս նաեւ՝ աշխարհի տարածքին վրայ գտնուող հայ մանուկներու կեանքէն դրուագներ: Գիրքը նաեւ տեղեկութիւններ կը բովանդակէ խոհանոցի, պարերու, գեղարուեստի, բանաստեղծութեան, մարմնամարզութեան, ժողովրդական բանահիւսութիւններու եւ խաղերու շուրջ:

Շուրջ վաթսուն էջերէ բաղկացած գիրքին մէջ յատուկ բաժին մը յատկացուած է Հայաստանի, անոր առաջին հանրապետութեան, Խորհրդային Հայաստանի, 1988 թուականի երկրաշարժին եւ Արցախի մասին:

Լոյս Տեսաւ Հայկական Հին Դրամներու Նուիրուած Հատոր Սը

Նախաձեռնութեամբ Դասական դրամագիտական խմբակին, վերջերս լոյս տեսաւ՝ «Արմինիըն Քոլնէյճ ին տը քլասիքըլ փիրիըտ» խորագիրը կրող հայկական վաղեմի դրամներու նուիրուած անգլերէն հատոր մը, որուն հեղինակն է քալիֆորնիացի դրամագէտ Ֆրենք Լ. Քովաքսի:

Հատորը, որ յիշեալ խմբակին հրատարակած «Դասական դրամագիտական ուսումնասիրութիւններ» շարքին 10-րդն է, հայկական դրամներու մասին վերջին տասնամեակին լոյս տեսած առաջին աշխատասիրութիւնն է, որ կը քննէ ամենահին հայկական դրամանիշէն (275 Ք. Ա.) սկսած աւելի քան 300 դրամներ:



142 էջնոց լաթակազմ հատորին գինը 90 տոլար է, ներառեալ՝ առաքում Միացեալ Նահանգներէն ներս: Միջազգային ապսպրանքներու սակը 125 տոլար է: Հատորին տարածումը ստանձնած է Հայկական դրամագիտական ընկերակցութիւնը, որուն հասցէն է՝ PO Box

210313, Milwaukee, WI 53221-8006:

Յաւելեալ տեղեկութեանց համար այցելել www.anasociety.org կայքը:

Բժշկական Փառատօն՝ Յանուն Առողջ Սիրտի Ապահովման



17 յուլիսին Քրեսենթա Հովիտի մէջ, յաւարտ Ս. պատարագի, տեղի ունեցաւ սիրոյ ճաշ: Հիւրընկալն էր Հայաստանեայց Առաքելական եկեղեցոյ հոգաբարձութեան անդամներէն Շահան Տէր Օհանէսեան:

Հիւրասիրութենէն ետք Ազգ. առաջնորդարանի «Տիգրան եւ Զարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ առողջապահական

ծառայութեան եզակի ձեռնարկ մը, ուր բժշկական ծառայութեան կողքին տեղի ունեցաւ նաեւ սրտի առողջութեան հետ կապուած ու անոր անխափան գործունէութիւնը ապահովող շահեկան դասախօսութիւն մը:

Քրեսենթա Հովիտի Հայաստանեայց Առաքելական եկեղեցոյ դաստիարակչական յանձնախումբի անունով դրկտ. Զարմինէ Նազգաշեան ողջունելէ ետք ներկաները շնորհակալութիւն յայտնեց առողջապահական փառատօնին մասնակցած բոլոր բժիշկներուն եւ բուժաշխատողներուն, որոնք փոխանցեցին իրենց գիտելիքները: Ապա ան ներկայացուց օրուան բանախօս սրտաբան տոքթ. Հերի Պալեանի բժշկագիտութեան մէջ անցած ուղին եւ հրաւիրեց զինք ներկայացնելու իր նիւթը:

Տոքթ. Հերի Պալեան ներկաներուն ծանօթացուց կանխարգելիչ հիմնական այն քննութիւնները, որոնք անհրաժեշտ են հսկողութեան տակ պահելու եւ ապահովելու սրտի առողջ աշխատանքը՝ շարունակելու համար մեր կեանքի ազնիւ պայքարը:

Դասախօսութեան ւարտին տոքթ. Պալեան պատասխանեց ներկաներու հարցումներուն:

Առողջապահական փառատօնի քննութիւններն ու ձեռնարկները տեղի ունեցան առողջապահութեան մասնագէտներու կողմէ: Բժիշկներ, դեղագործներ, ատամնաբուժներ եւ այլ մասնագէտներ սիրով կատարեցին արեան քննութիւններ, ճնշման, հասակի, ծանրութեան չափումներ եւ պատասխանեցին ներկաները հետաքրքրող առողջապահական հարցերուն:

Բարգէն Արք. Չարեանի Անդրանիկ Այցելութիւնը Վանքովըր

19 օգոստոսին Քանաւայի հայոց թեմի առաջնորդ Բարգէն արք. Չարեան անդրանիկ այցելութեամբ ժամանեց Վանքովըր:

Նոյն օրը երեկոյեան ան այցելեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի եւ արժանացաւ ժողովրդային մեծ ընդունելութեան: Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ կանոնական աղօթք: Ապա եկեղեցւոյ հովիւ Հրանդ վրդ. Թահանեան եկեղեցւոյ մեծ ընտանիքին անունով



բարի գալուստ մաղթեց սրբազանին, որ տուաւ իր անդրանիկ պատգամը:

Սրբազան հայրը իր խօսքին մէջ շեշտեց կարեւորութիւնը քրիստոնէական հաւատքին եւ հայեցի դաստիարակութեան, որոնք հիմքը կը կազմեն նոր սերունդի առողջ կազմաւորման եւ ճշմարիտ քրիստոնէայի ու իսկական հայու կերտման: Ան կոչ ուղղեց որպէս ամբողջական մեծ ընտանիք համախմբուելու եկեղեցւոյ շուրջ՝ միասնական ճիգերով եւ համագործակցութեամբ գաղութի ազգային եկեղեցական կեանքը աշխուժացնելու եւ նոր սերունդը դաստիարակելու ազգային արժէքներով:

Իր խօսքի աւարտին առաջնորդ սրբազանը կարդաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա. վեհափառ հայրապետին կոնդակը, որուն մէջ վեհափառը լանջախաչ կրելու իրաւունք կը շնորհէր Հրանդ վրդ. Թահանեանի: Եկեղեցական արարողութենէն ետք սրբազան հայրը կատարեց ջրաղբիւրի բացումը, որուն բարերարն էր Սարաֆեան ընտանիքը: Ապա ան ներկայ գտնուեցաւ «Սասուն» ճամբարի աւարտին կազմակերպուած ընկերային հաւաքին ու ընթրիքին:

Նշենք, որ առաջնորդ սրբազանը հանդիպումներ ունեցաւ հոգաբարձութեան, գործակից միութիւններու եւ պատկան մարմիններու հետ, ինչպէս նաեւ կիրակի օր Ս. պատարագ մատուցեց եւ նախագահեց «Սասուն» հայ պարի ամառնային ճամբարի 10-ամեակի հանդիսութեան:

ԱՅԼԱԶԱՆ

Միլվա Կապուտիկեան

Տասը տարի առաջ օգոստոս ամսուան մեզմէ հեռացաւ բանաստեղծուհի եւ հրապարակախօս Միլվա Կապուտիկեանը: Կապուտիկեանը գրած է հայրենիքին, հայոց լեզուին, հայ ժողովուրդի ճակատագիրին եւ սիրոյ մասին. ան ամբողջ կեանքը նուիրած է ստեղծագործական աշխատանքին եւ հայրենիքին:

20 յունուար 2009-ին, բանաստեղծուհիին ծննդեան 90-ամեակին օրը, անոր ապրած բնակարանը արդէն իսկ վերածուած էր տուն թանգարանի:

Իր կտակով Ս. Կապուտիկեան պահանջած էր որ բնակարանին ընդունարանը, ննջասենեակ-աշխատավայրը եւ հիւրասենեակը պահեն նոյնութեամբ, առանց բան մը աւելցնելու կամ պակսեցնելու...



Կապուտիկեանի կենսագրութեան փոխարէն, այսօրուան էջով կը ներկայացնենք տուն թանգարանէն լուսանկարներ, որոնք նոյնքան խօսուն են, որքան կենսագրական մը:

Յուցասրահին առաջին հատուածին մէջ ներկայացուած են Վանէն բերուած մասունքներ՝ կաւէ պտուկ, մետաղեայ տաշտակ, որուն մէջ լոզգեր են եւ նորածին բանաստեղծուհին եւ անոր որդին՝ Արա Շիրազը: Յուցադրուած է նաեւ կարի մեքենան, որ նուէր ստացած էր մօրմէ. երիտասարդ տարիքին բանաստեղծուհին յաճախ իր գծագրած հագուստները կը կարէր:

Մահճակալին մօտ գտնուող սեղանին անպայման պէտք է դրուէր քոնիաք, թէյի բաժակներ, միրք եւ քաղցրաւենիք:

1963-ին Ս. Կապուտիկեան Փարիզի մէջ կը հանդիպի Սիամանթոյի քրոջ: Վերջինս իր եղբօր գրիչը կը նուիրէ բանաստեղծուհիին:

Կոմիտաս վարդապետի ուրարին մէկ բաժինը Կապուտիկեանին նուիրած է փարիզաբնակ սփիւռքահայ մը. ան երկուքի կիսած է ուրարը եւ մէկ մասը իրեն վերապահած:

Գիտնականները Պարզած Են, Թէ Քանի՛ Ժամ Պէտք Է Ունենայ Աշխատանքային Իտեալական Շարաքը

Մելպուռնի համալսարանի եւ Ճափոնի Կէյոյի համալսարանի մասնագէտները կը յայտնեն, որ շաբթուան աշխատանքային ամէնէն արդիւնաւէտ տեւողութիւնը 30 ժամն է:



«Ինֆորմինկ» կը հաղորդէ, որ հետազոտողները կատարած են փորձ մը, որուն մասնակցած են 7,5 հազար տղամարդիկ

եւ կիներ:

Անոնք անցած են քննութենէ, որ ցուցադրած է տեղեկութեան հոսքի ընկալման անոնց մակարդակը: Պարզուած է, որ կան մարդիկ, որոնք շաքարական աշխատած են 30 ժամէ աւելի, անոնք քննութեան խնդիրները աւելի վատ լուծած են, քան անոնք, որոնց շաքարական աշխատածամերը 30 ժամէն պակաս են:

Կեռասն Ու Խնձորը Գիրութեան Դէմ

Ո՞վ ըսաւ, որ բոլոր աղանդերները պատճառ կը դառնան գիրութեան: Ան, ով որ այս հաստատումը կ'ընէ, նկատի չէ առած կարմիր գոյնի պտուղի տեսակները, ի մասնաւորի՝ խնձորն ու կեռասը:



Ըստ վերջին գիտական ուսումնասիրութիւններուն, խնձորն ու կեռասը ոչ միայն գիրութիւն չեն պատճառեր, այլեւ կը պաշտպանեն մարմինը գիրութենէն, կամ կը կանխեն գիրութիւնը, որ ծանօթ է «Ախտանշանային փոխարկութիւն» (Metabolic Syndrome) անունով:

Օրական Մէկ Խնձորը Կը Պաշտպանէ Սրտանօթային Հարցերէ

Արդեօք գիտնականները յայտնութիւն մը կատարած են կեռասին եւ խնձորին՝ գիրութեան բարդութիւններուն դէմ պայքարելու դերին առնչութեամբ: Պատասխանը այո է: Անոնք փաստած են, որ կեռասն ու խնձորը ոչ միայն կը նուազեցնեն գիրութիւնը, այլեւ կը կանխեն զանազան հիւանդութիւններ, ինչպէս սրտանօթային հարցերը եւ շաքարախտը, որոնք անմիջական առնչութիւն ունին գիրութեան հետ:

Գիտնականները այս եզրակացութեան յանգած են փորձարկութիւններ կատարելով երկու խմբակի չափահասներու վրայ: Առաջին խմբակի չափահասները օրինաւոր ձեւով խնձոր սպառողներն են, իսկ երկրորդ խմբակի չափահասները երբեք խնձոր չսպառողներն են: Առաջին խմբակին մօտ ի յայտ եկած է, որ «Ախտանշանային փոխարկութիւն» ունենալու տոկոսը 27 առ հարիւրով նուազած է՝ բաղդատած երկրորդ խմբակին:

Խնձորի սպառումը կը նուազեցնէ սրտանօթային ճնշումը 30 առ հարիւրով, ինչպէս նաեւ 20 առ հարիւր կամ աւելի տոկոսով կը նուազեցնէ մէջքի չափը, որ գործօն մըն է սրտանօթային հիւանդութեան, յառաջացման մէջ:

Միւս կողմէ, ան, ով որ մեծ քանակութեամբ խնձոր կը սպառէ, անոր մօտ կը նուազի սպիտի (protein) եւ կենսասնիթ Մէ-ի քանակը:

Մէկ խնձորը ինչպէ՞ս կրնայ կանխարգիլել առողջութեան սպառնացող վտանգը: Այդ ազդեցութիւնը կ'ըլլայ անուղղակի ձեւով: Ազդեցութիւնը մեծ է ի մասնաւորի այն անհատներու մօտ, որոնք ընդհանրապէս կը հետեւին առողջ եւ հաւասարակշռուած սննդականոնի, որ հարուստ է պտուղով, բնաթելով, կենսասնիթով, քալսիումով եւ փոթասիւնով, սակայն աղքատ է վնասակար ճարպով եւ շաքարով:

www.armenianprelacykw.org